

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԶԻԶՅԱՆ
SVETLANA AZIZYAN

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եղանակավորությունը նախադասության բովանդակության և իրականության հարաբերությունն է, երա իրական/անիրական լինելը, ինչպես նաև խոսողի վստահության աստիճանը հաղորդվող փաստերի նկատմամբ: Եղանակավորությունը իմաստաբերականական կարգ է, որի արտահայտման միջոցները տարբեր կարող են լինել՝ եղանակաձևեր, եղանակավորող բառեր, դերբայներ, դերբայական կառույցներ, ինչպես նաև նախադասության որոշակի կառուցվածքը: Եղանակավորությունն այնպիսի կարգ է, ինչպես ստորոգումը, հաստատումն ու ժխտումը, և գոյություն ունի ցանկացած նախադասության մեջ: Եղանակավորությունը կազմում է օբյեկտիվությունն ու սուբյեկտիվությունն իրար կապող մի ամբողջական լեզվաբանական քերականական կարգ, որն արտացոլում է օբյեկտիվ իրականությունն ու խոսողի ներքնաշխարհի հարաբերությունը: Եղանակավորության արտահայտման միջոցները հաճախակի հանդես են գալիս համատեղ գործածությամբ, որը և բերում է բազմաեղանակավորման, բայց հայտնի չէ, թե ինչ հարաբերությամբ:

Օբյեկտիվ եղանակավորություն են արտահայտում այն գործողությունները, որոնք լիովին համապատասխանում են օբյեկտիվ իրականության արդեն կայացած, կայացող և կայանալիք երևույթներին, որոնք արտահայտվում են սահմանական եղանակի տարբեր ժամանակաձևերով, ինչպես նաև եղանակավորող բայերի գործածությամբ այս ժամանակներում և այն եղանակավորող բառերով, որոնք հաստատում են գործողության իրավական լինելը՝ *actually, indeed, really, in fact...*

Սուբյեկտիվ եղանակավորություն է այն եղանակների, եղանակավորող բայերի ու բառերի գործողությունը, որոնք անիրական փաստեր են արտահայտում, որոնց մասին շատ տեղեկություններ չեն տրվում գործնական քերականության դասագրքերում կամ ձեռնարկներում: Եղանակավորության այդ միջոցներից, կարծում եմ, որ առաջնությունը պետք է տրվի եղանակավորության այն միջոցներին, որոնք առնչվում են եղանակներին, քանի որ եղանակները ձևավորում են նախադասության այն անդամը, որը ներկայացնում է նախադասության գլխավոր տեղեկություն կրողը՝ բայի դիմավոր ձևերով, չնայած չի կարելի բացառել եղանակավորության միջոցների ազատ գործածությունը նաև բայի անդեմ ձևերի հետ: Օրինակ՝ 1. *As for Pamela, I don't know what to say for her. Ինչ վերաբերում է Պամելային, չգիտեմ՝ ինչ ասեմ:*

2. Perhaps your sister will take her. Հավանաբար քույրդ կտանի նրան:

3. But I wish she was/were not so pretty. Երանի նա այդքան գեղեցիկ չլիներ:

Այս պարբերության առաջին նախադասությունում *don't know* դիմավոր բայաձևն արտահայտում է օբյեկտիվ եղանակավորություն և իր հաստատուն բացասական վերաբերմունքն արտահայտում է սահմանական եղանակի ներկա անորոշ ժամանակաձևով: Նույն պարբերության երկրորդ նախադասության մեջ խոսողը եղանակավորության իր վերաբերմունքն արտահայտում է պայմանական ապառնիի օգնությամբ: Իսկ երրորդ նախադասությունում, որն իրենից բարդ նախադասություն է ներկայացնում՝ խնդիր երկրորդական նախադասությամբ, որտեղ ունենք սուբյեկտիվ եղանակավորություն արտահայտված լրձական երկրորդ թեք եղանակաձևով, իսկ գլխավոր նախադասության մեջ ունենք օբյեկտիվ եղանակավորություն, արտահայտված սահմանական ներկայով: Այս պարբերությունում, բացի եղանակաձևներից, գործածվում է նաև *perhaps* եղանակավորող բառը, որը վերաբերում է դիմավոր բայով արտահայտված մի ամբողջ նախադասության: Հարց է ծագում, արդյոք հնարավոր է տարբեր եղանակների գործածությունը մեկ նախադասության շրջանակներում: Բայց վերը նշված բոլոր օրինակներում՝ պարզ թե բարդ, գլխավոր եղանակավորությունն արտահայտվում է բայի եղանակաձևերով՝ ուղիղ թե թեք, այսինքն բայի դիմավոր ձևերով: Սակայն պատահում են նաև օրինակներ, որտեղ եղանակավորությունները վերաբերում են բայի անդեմ ձևերին և արտահայտվում են ոչ թե եղանակաձևերով, այլ ուրիշ միջոցներով՝ եղանակավորող բառերով, ի վրացումն բայի եղանակաձևերի:

Եղանակավորող բառերի գործաբանական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք, չունենալով նյութակա իմաստ, կարող են վերաբերել ոչ միայն դիմավոր բային, այլև նախադասության որևէ անդամի արտահայտված բայի անդեմ ձևով: Օրինակ (1) *He may condescend perhaps to think I may be poor enough for his harlot and these things don't...* Հնարավոր է, որ նա արժանապատվությունը կորցնի և մտածի, որ ես բավականին աղքատ եմ իր ծախսու կնոջ համար...

Ինչպես երևում է բերված օրինակից խոսողը գործածում է բազմա-եղանակավորություն և արտահայտում է այն *may* եղանակավորող բայի գործածությամբ սահմանական եղանակի ներկա ժամանակում: Միևնույն նախադասության մեջ եղանակավորող բայից ոչ հեռու, *perhaps* եղանակավորող բառն է, որը դիրքով միջադաս է, գործածվում է բայի անդեմ ձևից առաջ, որը ոչ այլ ինչ է, քան միջանկյալ արտահայտություն, որն ինչպես հայտնի է շարահյուսությունից, նախադասության անդամ չէ և արտահայտության պլանում այն ներկայացնում է բայի անդեմ ձև, այսինքն եղանակավորող *perhaps* բառն այստեղ չի վերաբերում բայի դիմավոր ձևով արտահայտված ամբողջ նախադասությանը այլ իմաստային առումով՝ նրա մի բաղադրիչին արտահայտված բայի անդեմ ձևով՝ անորոշ դերբայով:

(2)... Pamela and Mrs Gervis are alone together in private, perhaps preparing for her... ... Պամելան և տիկին Ջերվիսը առանձնացել են հավանաբար պատրաստվելու... Օրինակ (2) երկրորդում առկա է օբյեկտիվ եղանակավորություն արտահայտված սահմանական ներկայով: Այս նախադասությունն ի տարբերություն նախորդի (1) իր կազմի մեջ ունի *preparing* ածական դերբայ, որին նախորդում է *perhaps* եղանակավորող բառը, որը ոչ թե ամբողջ նախադասությանն է վերաբերում (ինչպես հատուկ է եղանակավորող բայերին), այլ բայի անդամ ձևով արտահայտված *preparing* ածական դերբային:

Ելված այս օրինակներից կարելի է եզրակացնել, որ եղանակավորության գերիշխող կամ գլխավոր միջոցն արտահայտվում է եղանակաձևերով, իսկ եղանակավորող բառերով կարելի է արտահայտել խոսողի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքը, ինչպես խոնարհված բայով, այնպես էլ դերբայով արտահայտված գործողությանը: Չի բացառվում նաև, որ միևնույն նախադասության մեջ, բացի եղանակաձևերով արտահայտվող եղանակավորություններից գործածվեն ոչ թե մեկ, այլ մեկից ավել եղանակավորող բառեր: Օրինակ՝ (3) -Well, actually there's a couple of things really to ask you. Դե, իրականում մի երկու բան կա քեզ հարցնելու: Այս օրինակում երկու եղանակավորող բառ ունենք՝ *actually* և *really*, որոնցից *actually*-ն վերաբերվում է դիմավոր բայով արտահայտված նախադասությանը, իսկ *really*-ն անորոշ դերբայով արտահայտված գործողությանը, ուստի և նախորդում է ոչ թե ամբողջ նախադասությանը, այլ դերբային, ավելի կոնկրետ անորոշ դերբային: Եղանակավորող բառի դիրքը (նախադաս, միջադաս, թե ետադաս) կախված է ոչ միայն խոսողի մտադրությունից, նախադասության բնույթից, այլև այն բանից՝ խոնարհված թե անդամ բայով արտահայտված գործողությանն է վերաբերում: Օրինակ՝ (4) *Dombey obviously thinking the new work of his son in the business fashion (Dombey and son, 45)*. Դոմբին ակնհայտորեն մտածում էր, որ իր որդու նոր աշխատանքը որոշ չափով նորաձևության բիզնես էր...

Բարդ համադասական նախադասության մեջ, եղանակավորող բայի դիրքը կախված է այն փաստից, թե համագոր նախադասություններից, որին է պատկանում կամ լրացնում: Այն կարող է պատկանել հավասարապես երկու համագործերին, կամ նրանցից որևէ մեկին, որը և կորոշի եղանակավորող բառի դիրքը: Իսկ բարդ ստորադասական նախադասության մեջ եղանակավորող բառը կարող է իմաստային կապ ունենալ կամ գլխավոր կամ երկրորդական նախադասության հետ: Օրինակ՝ (5) *The earth was made for Dombey and son to trade in, and the sun and moon had really faith in her as an experienced and bustling matron. (Dombey and son, 15)*

Աշխարհը ստեղծվել էր, որ Դոմբին և որդին առևտրով զվաղվեն, իսկ Արևն ու Լուսինը փորձառու և անհանգստացած տիրուհու նման իրականում վստահություն էին ներշնչում:

(*Really*-ն դրվում է երկրորդ համագոր նախադասության մեջ քանի որ վերաբերում է երկրորդ համագոր նախադասությանը):

(6) I really think, I will wait no longer (David Copperfield, 22). Իսկապես կարծում եմ, որ այլևս չեմ սպասի:

Ակնհայտ է, որ երկրորդ նախադասությունն ըստ կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություն է, որտեղ *really* եղանակավորող բարդ դրված է գլխավոր նախադասության դիմավոր բայով արտահայտված բայ – ստորոգյալից առաջ: Անշուշտ հնարավոր է մի քանի եղանակավորող բառերի գործածությունը միևնույն նախադասության մեջ (3, 4 և ավելի): Երբեմն քերականորեն կարելի է արդարացնել խոսողի նման ընտրությունը, սակայն ռճի տեսակետից այն ծայրաստիճան անընդունելի է: Օրինակ՝ *The new law certainly may possibly have indeed been badly formulated.* (=It is certainly true that what I say now is possible: the new law may indeed have been badly formulated). Անշուշտ հնարավոր է, որ նոր օրենքը բավականին վատ է ձևակերպված:

Կարելի է եզրակացնել, որ եղանակավորող բառերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այս կամ այն իմաստը հաղորդելով նախադասության մտքին և արտահայտելով խոսողի վերաբերմունքը այս կամ այն իրողության, առարկայի նկատմամբ և չունենալով նյութական իմաստ, նրանք դրվում են նախադասության և նրա անդամների վրա անկախ այն բանից, թե ինչով են արտահայտված՝ բայի դիմավոր, թե անդեմ ձևով: Եղանակավորող բառի դիրքը իսկապես կախված է այն բանից, թե եղանակավորող բառերը իմաստային առումով կարող են լրացնել ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ բայաձևերին, որոնք շարահյուսորեն կամ պարզ, կամ բարդ համադասական, կամ բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ են: Եվ չի բացառվում մեկից ավել բառեր եղանակավորող բառերի գործածությունը միևնույն նախադասության մեջ, ինչպես նաև չի բացառվում եղանակավորության տարբեր միջոցների գործածությունը միևնույն նախադասության մեջ, որը և կարելի է անվանել բազմաեղանակավորություն:

Functional Properties of Modal Words

Modality is a category of linguistic meaning having to do with numerous kinds of expressions, that have modal meanings, the following is just the subset of the variety one finds in English:

1. Modal auxiliaries, 2. Semi-modal verbs, 3. Modal words or sentence adverbs, 4. Nouns, 5. Adjectives, 6. Some notional verbs, 7. Mood forms of the notional verbs, 8. Conditionals, 9. Various modal expressions, some occurring in specialized environments, each having a rather curious set of semantic, structural and functional properties. Some of the above mentioned modal expressions can be used in the same sentence to express different modal meanings and in the result we have to do with the phenomenon of multimodality. In this article we have cases of modal words used not only with finite verbs but also with non-finites, and cases with three modal words used in the same sentence with other expressions of modality.